

ՀՀ ԿԳՆ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
..... դպրոց
Երեխայի զարգացման և խնամքի ծառայությունների մատուցման

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

2016-2017 ՈՒՍՏԱՐԻ

ՀՀ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի դպրոցը ի դեմս դպրոցի
ղեկավարի (այսուհետ՝ Ղեկավար)ի ծնողը
(այսուհետ՝ օրինական ներկայացուցիչ) կնքում են սույն պայմանագիրը:

1. Պայմանագրի առարկան

Կրթահամալիրում իրականացվող «Ստեղծողի դպրոց. անհատի կրթական պատվեր. մեղիակրթություն» հեղինակային (պետական այլընտրանքային) կրթական ծրագրով 2-5 տարեկան երեխայի (այսուհետ՝ Սան) խնամքի և զարգացման կազմակերպում մոդել միջավայրում (Ծրագիր), որտեղ սաների թիվը չի անցնում 25-ը. այդ թվում 1.1 ինքնուրույնության, բնականոն, ազատ և համակողմանի զարգացման համար անհրաժեշտ միջավայրում սանի խնամքի կազմակերպում ամեն օր, բացի շաբաթ և կիրակի օրերից (ռեժիմը ընտրել)

9.00 - 17.00՝ երեքանգամյա սնունդով, 30.000 դրամ

9.00- 13.00. երկանգամյա սնունդով,դրամ

1.2 Սանի զարգացման կազմակերպում ուսուցման թվային միջոցների՝ էլեկտրոնային գրատախտակի, պրոյեկտորի, ֆոտոխցիկի, ձայնագրիչի կիրառմամբ.

1.3 ամենօրյա մարմնամարզություն, երաժշտություն (երգ ,պար խաղ, երաժշտական պարզ գործիքներ), տեխնոլոգիա, մարզական, այդ թվում հեծանիվային խաղեր, ամենօրյա լող ամառային լողափի բաց լողավազանում.

1.4 Սանի, խմբի գործունեության մասին ամբողջական տեղեկատվություն համացանցի միջոցով.

1.5 Սանի ֆիզիկական, առողջական վիճակի վերահսկում:

2. **Օրինական ներկայացուցիչն իրավունք ունի՝**

2.1 ՀՀ օրենսդրությամբ, պաշտպանելու Սանի շահերն ու իրավունքները.

2.2 ծանոթանալու խմբի տարեկան ծախսերի նախահաշվին և դրամական ծախսերի հաշվետվությանը

2.3 անձամբ կամ ծնողական խորհրդի միջոցով վերահսկելու պայմանագրի կատարումը, ծախսերը

2.4 տեղեկություն ստանալու Սանի նախակրթարանային գործունեության ընթացքի և արդյունքների մասին՝ համացանցի և այլ միջոցներով

2.5 ներկա լինելու Սանի նախակրթարանային գործունեությանը:

3. **Օրինական ներկայացուցիչը պարտավոր է՝**

3.1 Ծանոթանալ Ծրագրի փաթեթին, մասնակցել Ծրագրի սեմինարներին, քննարկումներին, ծրագրային մշակումներին.

- 3.2 մասնակցել Ծրագրի կազմակերպած ծնողի մանկավարժական իրազեկման, ինքնակրթությունն ու ինքնազարգացումն ապահովող պարապմունքներին.
- 3.3 ունենալ և գործածել համացանցին միացած համակարգիչ, էլ. հասցե, մշտապես հետևել կրթահամալիրի, Դպրոցի կայքերին, «Պարտեզ» ամսագրի աշխատանքին.
- 3.4 սահմանված կարգով Սանի բացակայությունների մասին ժամանակին տեղեկացնել դաստիարակին կամ գրասենյակի ղեկավարին.
- 3.5 Սանին ապահովել անհատական հեծանիվով, լողազգեստով, զարգացման անհատական ուսումնական նյութերով և միջոցներով.
- 3.6 Սանի արձակուրդի մասին (2 ամիս միանգամից կամ մեկական ամիս 2 անգամ) նախօրոք գրավոր տեղեկացնել Ղեկավարին.
- 3.7 անկախ Սանի հաճախումներից պայմանագրով որոշված վճարումները փոխանցել կրթահամալիրի հաշվարկային հաշվին ուստարվա սկզբում միանվագ կամ ամսական՝ մինչև տվյալ ամսվա 1-ը:

4. Ղեկավարն իրավունք ունի.

- 4.1. անհրաժեշտության դեպքում Օրինական ներկայացուցչին հրավիրելու նախակրթարան
- 4.2. Օրինական ներկայացուցչի կողմից իր պայմանագրային պարտավորությունները չկատարելու դեպքում պայմանագիրը լուծելու առաջարկ անելու կրթահամալիրի տնօրենին:

5. Ղեկավարը պարտավոր է.

- 5.1. ապահովել պայմանագրով որոշված ծառայությունները Սանի լիարժեք զարգացման, ուսուցման համապատասխան միջավայրում.
- 5.2. ապահովել սանիտարահիգիենիկ պատշաճ պայմաններ.
- 5.3. ապահովել սաների շուրջտարյա գործունեությունը համապատասխան ջերմային ռեժիմի պայմաններում
- 5.4 կազմակերպել Սանի՝ ուսումնական պլանով նախատեսված ուսումնական ճամփորդությունները.
- 5.5. խմբի բլոգի, ծեսերի, ստուգատեսների, ցուցադրությունների միջոցով պարբերաբար ծնողին ներկայացնել Սանի՝ կրթական ծրագրի յուրացման արդյունքները.
- 5.6. ապահովել ըստ ծրագրի տարեկան ծախսերի նախահաշվի՝ գումարի ծախսը և տարեկան հաշվետվություն ներկայացնել դպրոցի, խմբի ծնողական խորհուրդներին՝ ի գիտություն
- 5.7. սահմանված կարգով Օրինական ներկայացուցչի ցանկությամբ և միջոցներով կազմակերպել Սանի տրանսպորտային տեղափոխումը
- 5.8. ծնողի ընտրությամբ, սահմանված կարգով ապահովել սանի զարգացման (ուսուցման) լրացուցիչ ծառայություններ, որոնց համար կնքվում են լրացուցիչ պայմանագրեր:

6. Պայմանագրի ժամկետը, փոփոխման ու լուծման պայմանները

- 6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2017թ. սեպտեմբերի 1-ը:

- 6.2. Պայմանագիրը կարող է փոխվել կողմերի համաձայնությամբ: Կատարված փոփոխությունները կամ լրացումները համարվում են Պայմանագրի անբաժանելի մաս:
- 6.3. Պայմանագիրը ցանկացած ժամանակ կարող է լուծարվել Օրինական ներկայացուցչի նախաձեռնությամբ:
- 6.4. Պայմանագիրը կարող է լուծարվել կողմերից մեկի՝ պայմանագրային պարտավորությունները չկատարելու դեպքում:

7. Այլ պայմաններ

- 7.1. ----- ծնված Սաները 201-թ. հունվարից ըստ կարգի Օրինական ներկայացուցչի դիմումով և դաստիարակի համաձայնությամբ կարող են փոխադրվել առաջին դասարան. ծնողի հետ կնքվում է համապատասխան պայմանագիր.
- 7.2 Այլ պայմաններում սաները գործունեությունը շարունակում են նախակրթարանում.
- 7.3 Եթե պայմանագրի լուծարման պահին ծնողի կատարած մուծումներն ավելի են, քան պայմանագրով մատուցված ծառայությունները, կրթահամալիրը ծնողին վերադարձնում է մնացորդային գումարը:
- 7.4 Պայմանագրով չնախատեսված լրացուցիչ ծառայության համար կնքվում է լրացուցիչ պայմանագիր:
- 7.5. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող հայերեն երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:
- 7.6 Պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո Պայմանագրի օրինակը սահմանված կարգով Դպրոցում պահպանվում է հինգ տարի:

Պայմանավորվող կողմեր

Օրինական ներկայացուցիչ՝

Հասցե՝

Հեռախոս (նաև բջջ.)՝

Էլեկտրոնային հասցե՝

ստորագրություն

ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի»
կրթահամալիր» ՊՈԱԿ-ի
..... դպրոցի ղեկավար՝
Բանկային հաշվի համարը՝ Հայէկոնոմբանկ
Մետաքս մասնաճյուղ h/h 163218137665
Ստորագրություն

Ամսաթիվ